



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 8 Տ Ե Ր Ա Ր 19 ՓԵՏՐՈՒԱՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, ձիաղ Պեյ խանին ասկ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն րնել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Դաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :

Հասք 40 փաւրս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(صاريان) مطبعه سی — باب عالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի Հասսէսի քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տալտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅՔԱՅՔԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ստի ու ոտի եւ ձեռքի
վիանգամայն մեքենաներ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՔԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13. |
| ՍԱԻՐՏԱՐ | Չարչը Պօյու, թիւ 120. |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաւիճելու գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕՔՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՐՆՈՒՄԸ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ.

ԿԵԱՆՔԻ ՃԻՌՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

ՀԲԳԵՀԻ ՃԻՌՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
- ՖԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:
- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողհնաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Հաճօքուլօ խան, Թիւ 52, 53, 54, 55, 56:

Ընկերութեան կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր Գերկայացուցիչ
Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՂ 8

ՇԱԲԱԹ

19 Փետրուար 1905

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Հրաժարականի մը առթիւ եւ Հիւանդանոցի Աղջկանց Որբանոցը : (Խմբագրական) .
— ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ : Քիչ մը պա՛ր , եթէ կը հանիք . . . — ՍՄԲԱՏ ԴԱԻԴԵԱՆ :
Բարիզեան կեանքն . (Հարբուխը , ԷնՖլուէնձան) . — ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆԴԵԱՆ : Իդձ մը
(Լուսնկային) . — ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ : Յուշատետքիս եջերէն (Ֆանքզի) . — ՄԱՌԿՈՒԹ :
Բարեկենդանին առաջ . (Բերայի կեանքն) . — ԼԻԼԱ : 10,000 Տարի Սառնակոյսի մը մէջ
(Հանրագիտակի քերթօնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՄԸ ԱՌԹԻԻ

ԵՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ԱՂԶԿԱՆՑ ՈՐԲԱՆՈՅԸ

Հրաժարականներ կան որոնք շատ անգամ բարեբար դեր մը կը կատարեն մեր եկեղեցական ու կրթական և կամ վերջապէս բարեգործական հաստատութիւններու շրջանակներուն մէջ , և ընդհանուր դոհունակութիւն մը առաջ կը բերեն , անոր համար որ անոնք պատճառներ կրնան ըլլալ հիմնական բարեփոխումներու , եթէ անաչառօրէն յղացուած բարի կամեցողութիւններու զգացումը ունենան քիչ մըն ալ , այդ բոլոր հաստատութիւններուն խնամքըն ու հոգածութիւնը ստանձնող մարդիկ , եթէ մէկդի ձգեն քիչ մըն ալ անձնական նկատումները և անոնց դատապարտելի հետեւանքէն առաջ եկած , այս կամ այն անկարող անձերը այսինչ կամ այնինչ անհատին յանձնարարութեան վրայ պաշտպանելու արմատացած դրութիւնը որոնք քիչ մը քիչ փնտռէ որ կը պատճառեն ընդհանրապէս այդ հաստատութիւններուն ներքին և արտաքին կազմակերպութեան :

Առանց կաշանքողի հակառակ վարուելու , ըսենք որ ճիշդ այս հրաժարա-

կաններուն կարգը կը դասուի դժբաղդարար, Հիւանդանոցի Աղջկանց Որբանոցի կարեւոր մէկ պաշտօնէին տուած հրաժարականը և կամ անոր հրաժարեցումը, ինչպէս կը լսենք, որ անբացատրելի գոհունակութիւն մը պատճառեց ամէն անոնց որոնք մօտէն կամ հեռուէն հանդիսատեսը եղած էին զթուրթեան այդ դերազանցուպէս արժանի դպրոցին տխրահուշակ խղճալիութեան և խորունկ ցաւով մը կը տեսնէին անոր տառապագին անկումը :

Առաջին օրէն երբ լսեցինք որ Հիւանդանոցի Խնամակալութիւնը, իր անդամուհիներէն մէկուն թախանձանքին ու պաղատանքին վրայ, նոյն այդ անձին խնամքներուն յանձնելու է Որբանոցին հոգը, չը վարանեցանք յայտարարելու, եթէ չեմ սխալիր, թէ ծայրայեղօրէն ձախող ընտրութիւն մը եղած էր ասիկա, պաշտպանութեան ակնյայտնի գործ մըն էր պարզապէս, ու երբէք կարելի չի՛ պիտի ըլլար այդ կերպով, ձգենք բաղձացուած կատարելութեան, այլ նոյն իսկ քիչ շատ բարեկարգ ու օրինաւոր վիճակի մը հասցնել Որբանոցը, որ անհատական կամ թաղային վարժարան մը չէ՛ր վերջապէս, և հետեւաբար իր աւելի բազմապահանջ հանգամանքովը, կատարեալ շրջահայեցութիւնով օժտուած մէկը կը կուգէր իր գլխուն վերեւ, որ կարող ըլլար հոգ տանիլ որբուհիներուն ո՛րքան ուսումնական նոյնքան ալ ընտանեկան վիճակին, քանի որ Որբանոցը կրթութեան օրրան մը ըլլալէ աւելի, ընտանեկան յարկ մըն էր այդ անհայր ու անմայր աղջիկներուն համար, որոնք իրենց կարգին պէտք ունէին բացարձակ ամէն հոգեկան ու մարմնական խնամքներու :

Եթէ բոլորովին անաչառ ու անկողմնակալ ակնարկ մը պիտի նետենք սակայն նոյն այդ կին պաշտօնէին պաշտօնավարութեան թուականէն մինչև հիմա Որբանոցին ամբողջութեան վիճակին վրայ, պէտք է ըսենք որ Խնամակալութիւնն ալ զանցառութեան կարեւոր բաժին մը ունի, ու ո՛վ որ ալ եղած ըլլար վերջապէս Որբանոցին հոգը ստանձնողը, առանց առաջնոյն աջակցութեան, այս վերջինը մինակ չը պիտի կրնար պէտք եղած հոգածութիւնը ցոյց առալ որբուհիներուն, և անձնուէր ծառայութիւն մը ընծայել իր խնամքին յանձնուած հաստատութեան :

Ամէն անգամ որ պատահութիւնը կուենայինք այդ հաստատութեան սանուհիները տեսնելու, չէինք կրնար մեր ցաւը ծածկել անոնց խեղճուկրակ վրայ դուլը, պատուած, պատուած հագուստները, գրեթէ բոպիկ ոտքերը և տըխտը դէմքերը աչքի առջև ունենալով, ու կը զարմանայինք թէ ինչպէ՞ս կըլլար որ Խնամակալութիւններուն կողմէ հաւաքուած նախնադասութիւնները իրենց նպատակին չէին յատկացուեր ու երեսի վրայ ձգուած կը ներկայանային հանրութեան այդ դեռատի աղջիկները, որոնց մտաւորական վիճակը ա՛լ շատ հեռու և աւելորդ կը սեպէինք նկատողութեան աւանելու :

Եթէ ուսուցչուհիները կրնային պատճառ եղած ըլլալ անոնց մտաւորական դատտխարակութեան վատթարացումին, եթէ հոն պաշտօնավարողները այնքան պաշար չունէին վերջապէս իրենց մտքին մէջ, անշուշտ չէին կրնար ալ պատճառ եղած ըլլալ անոնց ընտանեկան այս դժբաղդ վիճակին, որուն հոգը աւելի՛ Խնամակա-

լութիւնը ստանձնած պէտք էր ըլլալ, որուն բարեփոխմը աւելի խնամակալութեան գործն էր վերջապէս:

Եթէ այս պաշտօնէին հրաժարականէն և կամ հրաժարեցումէն ետք, ո՛րը որ կուզէք, Որբանոցը իր նոյն վիճակը պիտի ունենայ, որբուհիները ո՛րքան մատուորական նոյնքա՛ն ալ ընտանեկան տեսակէտով, նոյն զրկանքները պիտի վայելեն իբր նուէր, եթէ նորէն անձնական շատ մը նկատումներ իրենց դերը պիտի խաղան, եղածը եթէ ոչ տեւորդ գոնէ անօգուտ բան մը պիտի ըլլայ անշուշտ, ինչ որ կրկին անգամ առիթ պիտի տայ ընականաբար գանգատներու կամ լուսաւորութեան:

Ամէն հաստատութիւններէ աւելի սիրուած՝ ամէն գուրգուրանքներէ և գգուանքներէ աւելի գուրգուրանք և գգուանք պահանջող հաստատութիւն մը, հանրութեան գութին և համակրանքին ամէնէն աւելի արժանի այս սանուհիները անխնամ ու երեսի վրայ թողուլ և կամ անոնց վիճակին խիստ մօտէն հսկողութիւն մը չընել, շիտակը այնքան գնահատելի գործ մը չէ և պատասխանատուութեան կարեւոր բեռ մը կը ծանրացնէ խնամակալութեան և հոգաբարձութեան վրայ, որոնք կատարելապէս գիտակ ես արդէն իրաց տխուր վիճակին և ցաւ մը կ'զգան իրենց ներսիդին իրենց վերին հսկողութեանը սակի գանուած հաստատութեան մը այս բաժնին հոգը ստանձնողներուն թուլութիւնն ու անտարբերութիւնը տեսնելով:

Եւ իրօք, ո՛րքան հակապատկեր:

Հիւանդանոցին ներքին մասը հետզհետէ բարեփոխ, զեղծումները քիչ քիչ անհետանան, քիչ շատ ընդհանուր բարեկարգութիւն մը տիրէ հիւանդարանի բոլոր բաժիններուն մէջ, պատուական ու բաղմարդիւն հոգաբարձուները ամէն խնամք ու զոհողութիւն չռայլին հաստատութեան բարեփոխմին համար, գերազանց անձնուիրութեան մը օրինակը տալով ուրիշներու, ու այդ հաստատութեան մէջ գտնուող Որբանոցը խնամքէ, հոգածութենէ, գուրգուրանքէ զտրիկ հանդիսանայ բոլորովին, և տխուր ճակատագիրը ունենայ Գաղլը-Չէշմէի Ս. Յուսէփայ որբանոցին այսօրուան անկերպարան վիճակին երկրորդ մէկ տպագրութիւնը ըլլալու:

Մենք այնքան հաւատք ունինք սովայն Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութեան իւրաքանչիւր անդամներուն անձնուիրութեանն ու գործունէութեանը վրայ որ, երբեք չենք կրնար մեր մտքէն անցընել թէ անոնք անտարբեր կրնանա՞ն մնալ երկու որբանոցներուն ալ այսօրուան վիճակին, և թէ անշուշտ այսօր կամ վաղը բարերար կարգադրութիւն մը պիտի ընել ուզեն, եթէ ոչ ուրիշ բանի, գոնէ անոնց մէջ պատասպարուող հարկւրուոր սաներ ու սանուհիներուն սիրուն, որոնց սիրտն ո՛վ գիտէ, ո՛րքան խոցոտուած է այս զրկանքներէն:

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ



ՔԻՉ ՍԸ ՊԱՐ, ԵԹԷ ԿԸ ՆԱԶԻԲ . . .

Ի՞նչ որ ալ բսեն սա մեր բարոյախօսները եւ սխալ հասկցուած պարկեճութեան մը պաշտպանները, պարահանդէսները իրենց սարեկան տղանցումը պիտի բնեն ու պարն ալ իր տեղը պիտի ունենայ մեր բարեբուն մեջ՝ ուղեմէ չուզենք:

Բայց իրա՞ւ է որ պարահանդէսը կամ կայրասօնը կամ (ժողովրդական բառով) պաշտօնաւոր երեկոյքները կը վնասեն մեր բարեբուն:

Իրա՞ւ է որ պարը վնասակար է:

Ու . . . ա՛լ չպիտի է պարենք . . .

Հարցումներուս առաջինը ժամանակ մը շատ ջերմ կուսակիցներ ունեցաւ, որոնք արիւն քնքով մտնէին մեզ համոզելու քե պարահանդէսները մեր բարեբուն կ'ապակեցնեն, երիտասարդներուն աչքը կը բանան, անբարոյութեան ժամադրաւարներ են, ելն: Եւ կրնամ ըսել քե յաջողեցան այս սխալ վարդապետութիւնը մեզի կ'լլեցնէ իբրեւ նեմատուրքիւն, եւ պարահանդէսին մօտան անցաւ՝ գոնէ մեզի համար:

Բայց պարը մնաց, մերոնք շարունակեցին պարել՝ իրենց տունին մէջ, հարսնիքներու՝ տոնախմբութեան՝ երեկոյքի ու նշանակաւոր գումարումներուն առթիւ, ու կը պարեն աւելի կամ նուազ յաջողութեամբ, կը պարեն հանրային քե մասնաւոր պարահանդէսներու մէջ, ժողովրդային քե ազնուապետական սրահներու մէջ: Միայն քե այդ խառնականներու եւ բարոյական քաղցրներու ազդեցութեան տակ, ա՛յնքան անաբեկ եղան պահ մը որ չափն ու ամանակը մոռցան. իրենց ոտները կարծես պարելու վարժութիւնը կորսնցուցին: Պարողներու՝ ամեն ազգի պարասերներու համախառնիկ խումբին մէջ մենք տեսաւ մը գրկեալներու, անհարակներու երեկոյքն առինք:

Մեզի՞ մնաց հոսանքին դէմ կռուիլ . . .

Չաղաքակրթութիւնը իր ընթացքը կ'ընէ, մենք ի՞նչ կրնայինք՝ ի հարկէ՝ կասեցնել անոր, որ ունէր իր լաւ՝ շինիչ՝ օգտակարն ալ, աննպաստ ու ապականիչ տարրեր:

Ու սխալ մ'էր պնդել քե պարահանդէս ու պար այդ ապականիչ տարրերէն էին:

Քննեցի հին գիւղերը, քաղաքները, բոլոր բարոյախօսներուն վարդապետութիւնները, աչքէ անցուցի հին քե նոր քաղաքակրթութեան վրայ հառող հասարակները, ու տեղ մը չգտայ, գոնէ մէկ տեղ մը ուր պարստուած, բանադրուած ըլլալ պարը: Ամեն դարու մէջ երիտասարդութիւնը երգած ու կայրած է, ծերութիւնն ալ՝ անցեալ կայր ու խայտալիցներու յիշատակովն է օրորուած: Ամեն լուրջ ու պարկեճ ազգեր ունեցած են իրենց հանրային խառնակները, տոները, հանդէսները ուր, զուարճութիւններու ալլ եւ ալլ սեռերուն մէջ, պարը լայն տեղ մը գրաւած է:

Պարը մարզանք մը ստեղծուած է, պարը զբօսանք նկատուած է, պարը առողջարար ու օգտակար զբաղում մը, գրեթէ անհրաժեշտ պէտք մը ճանչցուած է:

Չենք կրնար պարը արգիլել:

Սխալ վարդապետութիւն է պարը ասելի ու վնասակար բան մը ցոյց տալը:

Ու մեր մէջ, այդ սխալ վարդապետութեան քեյադրուած միտքերը ուժացուցին նոր տերունիք՝ պարելու այնքան ազնիւ ու օգտակար սովորութեանն՝ այն աստիճան որ մեր նորահաս երիտասարդները եւ մասաղաթի պարմանուհիները այսօր մասնաճիւղ կ'ըլլան իբրեւ յետամնաց, իբրեւ պարելու անվարժ, իբրեւ ընկերական ու կենցաղագիտական պայմաններու անընտել:

Մտաւային օրինակ մը չէ որ պիտի առաջ բերեմ: Իրական դեպքեր կը թելադրեն ինձի այս տղերք:

Վերջին պարահանդէսին մէջ, Ալեքսանդրաքիւնը, որուն վրայ այնքան գովեստ գրեցին մեր քերթերը, ու եղսնակին միւս ջոջ երեկոյքներուն մէջ ալ՝ դիտուեք է որ Հայ տարրը տեսակ մը ցուրտ վերաբերում ցոյց կուտայ դեպի պարը. ուսեալ, գեղեցիկ, շիւք, երիտասարդներ՝ որոնք անհրկէ են օտար պերճափայլ օրհորդներուն ընծայել պատշաճ մեծարանք, քե՛ պարելու, քե՛ պատուասիրելու մէջ: Մեր պարողները որ գիտեն ամեն տեսակ սեռական հանոյակասարութեանց մէջ նկուր ըլլալ, շնորհալի օրհորդի մը հետ, պարասրահի մը մէջ վարուելու պայմաններուն

բոլորովին անհեղեակ կը զսնուին, եւ, երբ իրենց կոպտութիւնը՝ նոն ամենուն առջեւ չպարզ՝ լու չափ ազնիւ տիկիներու կամ օրիորդներու կը հանդիպին, ասիկա բացառիկ բ ղդ մը պէտք է սեպեն:

Նոյն գանգասը կ'ընեն մեր բարձր ու միջին դասու օրիորդներուն համար որոնք « Պարեւ լու վարժութիւնս մոռցեր եմ » ի պէս անհարակ ու կեղծ պատճառներով կ'ապաստանին, ու այն բնիւր ընկերութեան մէջ, ուր կրնային յաջողութեամբ փայլեցնել իրենց բնասուր ձիւրները մոլորած, ու անվարժ երեւոյթ մը կը ցուցադրեն . . . :

Մեղք իրենց նապուկ հասակին: Մեղք իրենց գեղեցիկ աչուքներուն: Մեղք իրենց մտքի ու սրտի զանգեղուն: Մեղք, մեղք իրենց չնազ գոհարեղեններուն ու արդուարդներուն:

Օհ, հակազդեցութիւն մը անհրաժեշտ է. Պարասիրութեան թրոթականս՝ մը ընելու է, հայ կնոջ տաղանդը ու հայ տղամարդուն արժանիքները չվսանգելու համար:

Հրապարակագիրներն ու հրապարակախօսները թող մասնակցին այդ հակազդեցութեան գործին, ու բարոզեն համոզեն մեր նորընծայ երիտէն ու եղբայրները թէ օգտակար, շինիչ, բարեբար բան է, պարզ թէ անիկա բաղափառութեան վնասակար մեկ կողմը չէ՝ բնաւ:

Պարեցե՛ք, պարեցե՛ք, պարոններ ու տիկիներ, բաւական է որ պարեկ ետք, բրբնած՝ չմտիք ու չհիւրընդամ . . . :

ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Էրզրումի թերթիւ գործակալութիւնը յանձնուած է՝ ՎԱՀՐԱՄ ԷՖ. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ, որուն պէտք է գիմեն ամէն անոնք որոնք կը փափաքին բաժանորդագրուիլ ՀԱՆՐԱՊԵՏԱԿի:

ՅԱԶՈՐԴ ԹՈՒՌՎ

ՇՈՒԺԱՆ

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ

ԵՐ

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ

ՆՇԱՆՈՒԱԾ



Հանդիմով կը ծանուցանենք թէ Հինգշաբթի օր, 17 Փետրվար 1905, Պատրիարքարանի մէջ տեղի ունեցաւ Թերթիս սիրուած խմբագրին ՎԱՀԱՆ ԷՖ. ԹՕՇԻԿԵԱՆԻ եւ համակրելի աշխատակցուհիին ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻի նշանախօսութիւնը: Ամեն. Տ. Օրմանեան Ս. Պատրիարք Հայրը օրհնեց այս նշանախօսութիւնը պատշաճ յորդորականով մը եւ երջանկութիւն մաղթեց:

Վահան ԷՖ. Թօշիկեան մեկն է օրումն այն յաջող հրապարակագիրներէն որոնք հանդիմով կը կարդացուին միշտ ընթերցասէր ժողովուրդէն: Ինքը իր երիտասարդ հասակին մէջ նետուած է լրագրական ինկպէս նաեւ գրական ապարեզը, եւ այսօր խմբագրական մարմնոյն մասը կը կազմէ մեր ամենէն ժողովրդական օրաթերթ Մանգումէի: Սուր միտք, դիտող աչք եւ սահուն ուն, ահա հրապարակագրի մը իմ փնտրութիւնք առաւելութիւններ, գորս կրցած է պատշաճապէս միացնել իր մէջ սիրելի խմբագիրը:

Իսկ Օր. Հայկանոյց Մամք, մեր արդի կնոջական գրականութեան ամենէն առոյգ եւ քեղուն մեկ ներկայացուցիչն է, որուն տերութեան կը փնտրուին, իր հաճելի արձակին եւ գրական կտորներուն հետ:

Համեագիտակ իր արագին շրմորհարարութիւնները կը յայտնէ երկու նշանածներուն իրենց այս խիստ բարեղէնք ընտրութեանը համար:

ԲԱՐԻՁԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ՀԱՐԲՈՒԽԸ, ԷՆՖԼՈՒԷՆՁԱՆ

Թատրոնը, սրճարանը, սալոններուն մէջ, վերջապէս ամեն տեղ փռնդալէ, սաստիկ հազէ ուրիշ բան չի կայ . . . Բիթերը կարմրած են, աչքերը ուռեցած և ջրով ողողուած են . . . Ձայները խղճուկ կ'ելլան, գլուխները ծանր են և Բարիդ ամբողջ, ամեն վայրկեան շառաչմամբ կը խմէ :

Հարբուխը, անպիտան, գարշելի հարբուխն է որ կը տիրէ . . . Անկէ ամեն մարդ չի մեռնիր, սակայն ամենքն ալ անկէ կը բռնուին : Բոլոր խօսակցութիւնները այս նիւթին շուրջը կը դառնան :

— Էնֆլու . . . հէքիւ ! Էնֆլուէնձա եղայ . . . աչքերս չ'են տեսներ ալ, չ'եմ կրնար խորհիլ բանի մը վրայ, հէքիւ !

— Հապա ես ! մարմնոյս ամեն կողմը ձուլուած է կարծես : Ոսկորներս ամբողջ . . . հէքիւ ! անանկ կը ցաւին որ ! ասկէ դատ բնաւ ախորժակ չկայ և ձիու չափ ալ տաքութիւն ունիմ :

- Բիթս աղբիւրի փոխուեցաւ :
- Անիծեալ ըլլայ հարբուխը !
- Անիծեալ ըլլայ էնֆլուէնձան !
- Հէքիւ !
- Հէքիւ !

Արուեստագէտներու փորձանք անհանգըստութիւններու պատճառաւ Թատրոնները ոտքով ձեռքով կապուած են : Տանտերերը, որոնք իրենց սարքած պարահանդէսին 100 հրաւիրեալի ներկայութեան վրայ յոյս դրած էին, 18 հոգի միայն ընդունեցան . . . ասոնցմէ ալ ոչ մէկը պիտի հաճէր իր թաշկինակը նետել հարսնոց աղջկան մը . խըմչելու համար այդ թաշկինակին պէտք ունին : Խոհարարուհիները ապուրի ամանին մէջ կը փռնդալան, վերջապէս ամեն մարդ կը փռնդալայ :

Որոշուած ժամուն ուստի վաղիկ ներկայ ըլլալու համար Բարիդի մէջէն կ'անցնին : Շունչը բռնուած, վերէն վար ցելսերու մէջ

կը հասնիս և կ'իմանաս որ « պարոնը, սաստիկ հարբուխ ունենալուն, իր սենեակը փակուած է » : Անկարելի է մէկը տեսնալ . . . Բաղաքին կէսը էնֆլուէնձայէ պառկած է, իսկ միւս կէսն ալ սպասելով բան մը չի կորսնցներ : Ամեն մարդ կը տրտնջայ, ի բաց առեալ, բնականաբար, բժիշկները !

Հարբուխը Թատրական արուեստին պատահաններէն մէկն է, անկէ է որ ամենէն աւելի կը դողան հեղինակները և արուեստագէտները :

Կարելի չ'ըլլար Թատրական ներկայացում մը տալ, երբ հազը և փռնդալը կ'ընկերանան անոր :

Ամենքդ ներկայ գտնուած էք երբեմն ձմեռնային գիշերներու, ուր ամեն մէկ բառ, ամեն մէկ եղանակ անդադրում հազով մը կ'ստորագծուին, ժողովուրդին չի հազացող մասը դործ չ'ունի նէ « կը բաւէ, կը բաւէ » թող պօռայ, հազացողները նորէն կը հազան !

Մտիկ ըրէք, ինչ կը պատմէ Էրնէսդ Պըլլում գուսաներգակ բանաստեղծը :

Օր մը, Վօտըլիի Թատրոնին մէջ ներկայացուած խաղ մը անյաջողութեան դատապարտուեցաւ, Լը Կիյոլա անուն երիտասարդի մը անհատնում սուտ հարբուխին պատճառաւ միայն :

Այս երիտասարդը հեղինակին դէմ ատելութիւն մը ունէր արդեօք, չ'է նէ պարզապէս զուարճանալ կ'ուզէր : Պատճառը չգիտցուեցաւ բնաւ : Առաջին կարգն էի ես : Լը Կիյոլա հանգստորէն բազմած էր երկրորդ յարկը, առաջին յարկին ճիշդ մէջտեղը : հանդարտ և պաղարիւն էր և լրջօրէն մտիկ ընելու կերպարանք մ'ունէր : Ներկայացուած խաղը, որ ոտանաւոր էր, կ'սկսի, հատուածի մը լմնալուն, Լը Կիյոլա կը փռնդալայ, բայց ուժով և տարօրինակ կերպով մը կը փռնդալայ :

Երեւակայեցէք պայթիւն մը որ քիթէ մը դուրս կը պոռթկայ, թնդանօթի հարուած մը որուն վրայ մարդ կրնայ, Բալէ Ռուայ-յալիին նման, ճշդել իր ժամացոյցը :

Սրահին ամբողջ բազմութիւնը, խնդալով, Լը Կիյոլայի կողմը կը դառնայ, իսկ անիկա բոլորովին անտարբեր կը ծափահարէ

հատուածին և խաղին մեծ ուշադրութեամբ մտիկ ընել կը շարունակէ :

Ուրիշ հատուած մը կուգայ, Լը Կիյոուա նորէն կը փռնգտայ . սակայն այս անգամ չառաջիւնը այնչափ սպառնիկ է որ ապակիները կը դղրդեցնէ և օգային կազի պէգ մ'ալ կը մարի :

Ժողովուրդը խնդալէն կը ճաթի, Լը Կիյոուա միշտ անտարբեր, մեծ եռանդով մը կը ծափահարէ հատուածին :

Թաղապետական պահակները կուգան և դուրս հանել կուզեն աս չափազանց աղմուկ հանող հարբաւաւորը . բայց երիտասարդը կը բողբէ :

— Յանցանքը իմ չ'է, կ'ըսէ, հիմա պաղ աւի, երբ այս խաղը, զոր սքանչելի կը գտնամ, տեսնելու համար, թատրոնին դրան առջև, բայց օգին կարգիս սպասելու հարկադրուած էի :

Եւ նորէն ծափահարեց !

Այս իրաւացի դիտողութեան վրայ, պահակները կը քաշուին, անոնք ալ փռնգտաւով սակայն :

Վարագոյրը կը բացուի, երկրորդ արարուածն է . այս անգամ ինչպէս կ'երեւայ Լը Կիյոուա ինքզինքը բռնելու նպատակաւ շատ կը ճգնի :

Բնականաբար, հիմայ ամբողջ սրահին աչքերը իր վրայ յառած են և անոր հարբուխովը կը զուարճանան այլ եւս քան թէ ներկայացուած խաղով : Կը դիտեն երբեմն որ իր խղճամտութեան բերամբ քիթը ուժով մը կը սխմէ չալայթելու համար :

Տեսարան մը վրայ կը հասնի ուր առաջին դերասանը առաջին դերասանուհիին մօտենալով բաներ մը կ'ըսէ .

— Դիչերը անոյշ է : Նայէ, ամեն բան հանդարտ է շուրջերնիս, ոչ մէկ շշուկ կը խանգարէ այս հիանալի լուսթիւնը !

Կերեւի թէ Լը Կիյոուա ալ չկրնար դիմանալ, սարսափելի փռնգտալ մըն է թող կուտայ, անանկ սարսափելի որ սուֆլէօնն անգամ իր տուփին մէջէն կ'արթննայ :

Դերասանները խօսելէ կը դադրին, ժողովուրդը խնդալէն կը մարի և Լը Կիյոուա միշտ անտարբեր կը ծափահարէ :

Լմեցաւ, խաղը կ'որոտած էր, այդ վայրկեանէն սկսեալ ամեն տողին փռնգտացող մը

կամ հաղացող մը անպակաս էր, բայց յաղթութիւնը միշտ Լը Կիյոուայի քով մնաց, որ կարծես անպատճառ բէլօլվէր մ'ունէր քիթին մէջ և սակայն միշտ խենդի պէս կը ծափահարէր :

Այսու հանգերձ, խաղին վերջանալուն, դերասան մը բեմ կ'ելլայ, հեղինակին անունը տալու համար Լը Կիյոուա ոտքի կ'ելլայ, թեւերը սրահին երկու կողմերը կ'երկընցնէ, կարծես իմացնելու համար որ պիտի խօսի . ամեն մարդ կ'սպասէ, դերասանը կ'ընդհատէ իր խօսքը և ան ալ կ'սպասէ : Լը Կիյոուա նորէն շարժումներ կ'ընէ, քիթէն չունչ առնել տալու երեւոյթ ունի և աս անգամ ալ պզտիկ, բոլորովին պզտիկ փռնգտալ մը դուրս կ'ուտայ, այնչափ թեւ որ ինքն իսկ կ'ըսէ իւրովի :

— Վայ ! հարբուխս քիչ մը աւելի աղէկ է :

Եւ նորէն, ամենայն հանդարտութեամբ կը նստի :

Բնականաբար, դերասանը չկրցաւ բնաւ արտասանել դժբաղդ հեղինակին անունը : Խաղն ալ հաղիւ հինգ կամ վեց անգամ ներկայացուեցաւ :

Կ'ըսուէր թէ խաղին ամենէն զուարճացուցիչ մասը Լը Կիյոուայի փռնգտալները կը կաղմէին, հետեւաբար երկրորդ ներկայացումէն սկսեալ զանոնք դադրեցնելով մեծ պակասութիւն մը գործուած եղաւ :

SERGINES

(Թարգմանեց)

ՄԻԲԱՏԷԼ, ՆԱԼՊԱՆԴԵԱՆ

Գատըգիւղ

Ձ Ե Կ Ո Յ Յ

Մեր այն գաւառի բաժանորդներուն, որոնք տակաւին չեն զրկած իրենց բաժնեգիրը, չպիտի զրկուի Հանրագիտակ յաջորդ շաբթուրէն սկսեալ : Իսկ անոնք որ կ'ուզեն նոր բաժանորդագրուիլ Հանրագիտակի, պարտաւոր են կանխիկ վճարել լրտնեղինը մահարարով :

ԻՂՁ ՄԸ

ԼՈՒՍՆԿԱՅԻՆ

Ա.

Եկո՛ւր, շուսնակս մըսերիս,
Եթեաճեմ որո՞ւ սեր իմ,
Եկո՛ւր, ծագե հոգւոյս խոր,
Տըժգոյն, հիւծեալ սիրս աղուոր:
Ոհ, նըշողէ իմ անհուն
Խորհրդու մեջ վըշտաւուն,
Ուր կը գըտնես աւերակ,
Ծեր օրերու յիշատակ . . . :
Յունց տուր սրտիս նըշաղուն
Գօս ու կըծկեալ շարերուն
Առանց շողիդ հոգիս հեզ
Ծաղիկ մընէ տօթակեզ:

Բ.

Երբ միայնակ հոն հեռուն,
Դիշերունս սեւ ժամերուն
Կ'երթամ ճեւեղ վայրայած՝
Աղօթելով առ Աստուած,
Կամ կապուտակ շնակին խոր
Խառնել յոյզեր նորանոր . . .
Լոյս ժպիտով սիրակեզ,
Ո՛հ, դուն հո՛ն աչ գիս կա՛յրես:

Գ.

Դըժնիկներու ճամբուն իմ
Երբոր մարի իմ շունչս հոյ,
Եւ դարկանամ շողիդ պէս,
Թուիս ամպերու տակ պէս պէս,
Կամ կայծ եղած փայլիմ վիս,
Ըղձակներս կը յիշե՛ս:
Օր մը կամ քե մարմինս ցուրտ
Տեսնես նեւտած աւազուտ
Աշիկներու մեջ դեզ դեզ
Այն ասեմ գեթ կը յիշե՛ս . . . :
Կամ շիրիմիս շուրթիս տակ
Վե՛րջ տամ սիրոյս, ու համակ
Սառ հող ըզլամ, սեւերես,
Անշեջ իմ հուրս կը յիշե՛ս:

Դ.

Հուսկ փափափ մ'աչ, կը ներես,
Լքած եղիր շըրքներես.
Երբ որ քերե մուք գիշեր
Շիրմիս վերեւ քանձր ըսուեր,
Աչ իմ վրաս մի՛ ծագեր . . .
Ես չեմ ուզեր զգուսնակեր:

ՀԱՅԿԱՆԱՅԵ ՄԱՌԻ

ՅՈՒՇԱՏԵՏՐԻՍ ԷԶԵՐԵՆ

(ՅԱՆՐԱԳԻՏԻ)

Երկուշաբթի

Գինիէն զատ, մարդ ամեն բանին նորը
կը փնտռէ այսօր, ինչպէս գլխարկին, հա-
գուտին, կօշիկին, բարեկամին, էլն. էլն.
բայց ի՞նչ կըսէք երբ այս փնտռուած նորե-
րուն վրայ նոր մ'ալ ես աւելցնեմ, բառին
նորը որ այս օրերս բերնէ բերան կը չըջի
Բերայի մէջ:

Այս նորեկուկ ու բոլորովին մօնտէն բա-
ռը ներկայացնելու համար սովորական երես-
տեսէ չպիտի առնեմ ընթերցողներէս, այլ
միայն պիտի գոհանամ քաղել անուշ ծի-
ծաղներ:

Այս չքնաղ բառը՝ ԲԵՐԱԶԻՆ է:

Ամերիկացիներու՝ Եանքի, Գաղիացիներ-
րու՝ Բառիզիէն, ու Բերացիներու ալ բերա-
զիէն անունը տալ սկսած են հիմա . . . :

Կը տեսնէք որ Բերան վայելողները որ-
չա՛փ . . . մեծցուցած են գործը:

Ասկէ առաջ օրուան նոր բառը բէռօթն
էր, հիմա այդ անունը՝ էլատօ գլխարկնե-
րուն, քլօշ բէշերուն պէս տէմօտէ ըլլալով,
տեղի տուաւ աւելի ալամօտանկա բառի մը,
որ յիշեցնէ բուն Բառին:

Այս հաշուով Մեծ փողոցը բնակող
պանքէռուհիէն մինչեւ Զայր-պայիրին կծկը-
ւող լուացարարուհին բէրազիէն պիտի կոչ-
ուին, քանի որ բնակութիւննին Բերա է ան-
խըտիր:

Մենք առանց իրաւունք ունենալու ո՛ր է է
դիտողութիւն ընել այս բառական քմահա-
ճոյքին, պարզապէս բան մը պիտի խընդ-
րենք, եթէ երբէք ընդունելի ըլլայ երանելի
Բերացւոց:

Թէ՛ երբ այս բերազիէն խառը գործածե-
լու ըլլան, այնքան չի կապկեն ու այդ բա-
ռին մէջ գտնուած խեղճ Բ գիրը Զի փո-
խելով՝ բեղազիէն ըսելու ծուկութիւնը չի
գործադրեն . . . :

Հօղքէնգի . . . :

Երեքշաբթի

Նախանձոտ ամուսիններուն աչքերնին լոյս։
Երբ նախանձոտ կըսեմ, խօսքս կուզղուի
այն կարգ մը հինօրէնք ընտանիքի տէրե-
րուն, որոնք սովորութիւն ունին իրենց կի-
նը դուրս հանել տարին միմիայն ջարս ան-
գամ։ Ձատկին առտուն եկեղեցի, Մայիս
մէկին մօտակայ լեռը կաթ խմելու համար,
Սեպտեմբերին մէկ անգամ ջուրերը, և չոր-
րորդ՝ Աղքատախնամներու ի նպաստ սար-
քուած թատերական ներկայացման։

Խեղճ կիներ, ձեր ամուսինները սա հաս-
տատ համոզումը ունին թէ՛ դուք որչափ
տանը մէջ փակուիք, այնքան վրայ կը գը-
նէք . . . միտով, ինչպէս կընեն խազերուն
պարարտութեան համար։

Հիմա Ամերիկայէն լուր կուտան թէ՛
թատերական ո՛ր և է ներկայացում վայելելու
համար տունէն դուրս ելլալու հարկ չիկայ,
այլ՝ կը բաւէ թատրոնէն թել մը երկարել
տան ո՛ր և է մէկ սենեակը, ու այդ թէլին
միջոցաւ լսել ներկայացումը առանց նոյն
խսկ տեղէ չարթելու . . . :

Արդ, երբ ճիշդ է այս նորոյթը, այդ
կարգի նախանձոտ ամուսիններու գործը
գործ է ըսելէ, իսկ գալով տիկիններուն . . .
Je ne saurais vous dire

Չորեքշաբթի

Քանի որ Փետրվար ամիսին մէջ կը
գտնուինք դեռ, կարծէ որ մէկ երկու խօսք
ալ ընենք նոյն այդ ամիսին մէջ տեղի ու-
նեցած յաջորդական սուռահանքերու՝ անխու-
սափելի պարերուն տանքերուն առթիւ։

Կը հաւատա՞ք, երբ ըսեմ թէ պարել չենք
գիտեր, թէ և դաշնակի մը և կամ ուրիշ
ո՛ր և է նուագի մը տուած թէմբօն համեմատ
կը ցատկենք պոչերնիս երեքնելով աջ ու
ձախ, առանց ըրածնիս գիտնալու, և ա-
ռանց հասկնալու այդ շարժումներուն բուն
նպատակը։

Երբ պատեհութիւնը ունենանք և առի-
թը ներկայանայ, առանց քաշուելու մէջ-
տեղ կը նետուինք ու հասակնիս ցցելով
կսկսինք հորձ, հորձ, ձօճել մարմիննիս, որ
յաճախ ալքօրի էսանսէն կ'երերտկայ, քան
թէ գիտակցութեամբ։

Պարը որ ըստ ինքեան կանանց յատուկ
և անոնց վայել զբօսանք մընէ, դժբաղդա-
բար մերինները այսինքն հայ կիները և օրի-
որդները, շատ սուղ բացառութեամբ զուրկ
են զայն գիտնալու առաւելութենէն, և սա-
կայն երբ առիթը ներկայանայ, կը ցատկեն,
կը վազեն բէշերնին կը թռցնեն, սա միակ
համոզմամբ թէ բօլքային երեք անգամ ոտք
պիտի նետեն, վալսին ծունգ կոտրելով Եայ-
լանմիջ պիտի ըլլան, ու քատուիլին կեռտան
պիտի կոտրեն, անկէ անդին, հաւատացէք
բան մը չեն գիտեր։

Ըստ իս աւելի լաւ է այդ տեսակ պա-
րագանքներուն, անկիւն մը կծկուիլ ու միտեա
սուլմասին թէրթիպով զբաղիլ, քան թէ
մէջտեղ ելլալ, պօյ ցցել։ Գոնէ հագած
մետաքս պլուզներուն թեւերուն տակը քրո-
տինքէն ազատէին . . . :

Հինգշաբթի

Կամուրջին վրայէն կանցնիմ։ Օգը ցուրտ,
ու բոլոր ինծի պէս մտած անցորդները ժամը
տասը մղոն արագութեամբ ոտք կը նետեն
քիչ մը պակաս կլլելու համար այն սուր
պաղ հովը որ էնֆլուէնցային բերնէն կը փչէ։

Երկու աղջիկներ — աղջիկ ըլլալնին
գլխարկնուն պարզութենէն և դէմքերնուն
մաքրութենէն կուահեցի —, երկուքն ալ
տաք խօսակցութեան մը բռնուած էին,
այնպէս որ, կարծես իրենց տան պարտէզը
բռնմնատ մը կընէին թեւ թեւի։

— Որոշումս տուի խուշս, մանուօլին
պիտի սովորիմ։

— Ո՛ւՖ . . . դաշնակը աւելի աղէկ էր
խըյանէթ . . . :

— Հոգիս մանուօլինը մէկ ոսկի, մինչ-
դեռ դաշնակը . . . :

— Իրաւունք ունիս հոգիս, բայց գիտ-
նալու ես որ դաշնակին գործն ալ ուրիշէ . . . :

— Մանաւանդ դասը շատ սոժան, շատ . . .
գրիթէ անհաւատալի . . . :

— Բայց հոգիս, դարնելիքդ մանուօլին
մը չէ . . . :

Ու մինչ այս ծախու խուշիկները այսպէս
խօսակցելով ոտք կը նետէին թաց կամուր-
ջին վրայ, քիչ մը անդին կեցող հրեայ մը
կը պօռար անընդհատ։

— Օն թանկ քիւր բառայա՛ . . . ման-
տօլի՛ն . . . :

Որչափ ալ քէմաղեցաւ սա չըլթիկ նու-
ազը . . . :

Ուրբաք

Մանրալուրեր , օրը օրին :

— Ռուս և Ճաբոն պատերազմը դեռ կը
չարունակուի :

— Սկիւտարի մանկապարտէզներուն մէջ
փայտը հատած ըլլալուն , հիմա պղտիկնե-
րուն հօ ընելով տաքնալու մէթոտը կու-
սուցուի :

— Տիար ԼիլԱ բոլորովին ապաքինած
ըլլալով ինքզինքը կրկին իր նիւթերուն
թօքուլամիշ ըրած է :

— Սթաթիսթիքի մը նայելով աշխարհիս
վրայ մէկ վայրկեանի մէջ երեք մանչ և
երկու աղջիկ կը ծնին :

Շաբաթ 19 Փետրուար 1905

Մեծապատիւ ծանրաձեւն բաժանորդք
ՀԱՆՐԱԳԻՏԱԿ չաբաթաթերթին :

Խմբագրութիւնս նկատի առնելով ձեր
քիչ մը ոչ նախանձելի բնոյթը որով չէք ու-
զեր սապօն ջուրէ մը անցընելով մաքրել ձեր
փտած վճարքները , կը փութայ յայտարա-
րել թէ՛ հակառակէ պիտի այն բոլոր բաժնե-
գիրները , որոնք ձեր մօտ գօսցած ու միջ-
բոպներու բոյն դարձած են անվրէպ . . . :

Հաճեցէք կանխաւ ընդունիլ մեր խօսքին
անկեղծ պաղ պուզ հաւատարմքը :

Ի դիմաց Խմբագրութեան

Ձերդ

ՄԱՌԿՈՒԹ

ԳՈՀԱՐՄԱՏԵՆԻԿ հայ տղոց , որ կը պա-
րունակէ բարոյական գեղեցիկ պատմու-
թիւններ , նկարագրութիւններ և տոհմային
սովորութիւններ , պարեր ու խաղեր :

ՄԱՆԿԱՎԱՐԹԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
տղոց տարիքին յարմարեցուած միակ դիւ-
րուսոյց քերականութիւնն է պատկերներու
վրայ սովորեցնող :

Գին Ա. մասին 50 փարա , Բ. մասին 100
խօկ Գ. մասին 4 զրուշ :

Կեդրոնատեղին է ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Մէրճան փողոց թիւ 57

ԱԶԲԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԽԲ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ , շուիլ եւ աղամանդներով
զարդարուիլ , ինչպէս նաեւ սան կա-
րասիներ կոկել ամէն կերպով , առանց
հասկնիդ պարպելու

Ս. Յ. Լ.

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր ես , աղջկանդ օծիտը կը մտածես՝ դիմէ՛ .

Օրի՜նդ ես , շիք և աժան հագուիլ կուզես՝ դիմէ .

Երկուստարդ ես և շիքը կը սիրես՝ դիմէ .

Տարեց ես և ցուրտէն պատապարուիլ կուզես՝ դիմէ .

Տղաքներ ունիս որոնց պիտոյքը գտնել կը ճամեցնեն՝ դիմէ

Անուանացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ

Եկածը Կաղանդ , է նուէրներ գնել կը փափաքիս՝ դիմէ . . .

Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ

Ձեռքդ պարտաւ ճամբայ քալել չե՞ս սիրեր՝ դիմէ .

Կուզե՞ս առնող կոկել ճաշակուոր կարասիներով՝ դիմէ

Առաջնակարգ և տոկուն զուլպաներու պէտք ունիս՝ դիմէ

Կուզես շիք , ճաշակուոր և լաւ տեսակ փոկապներ ու-

նենալ՝ վերջապէս կուզես՝ ոտից ցլուխ հագուիլ , շքուիլ ,

պճնուիլ

Դիմէ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ԳՈՒՅՈՒՄՃՐԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

ուր պիտի դառնան ամէն տեսակ հագուստի ,
ճերմակեղէնի , Ֆանթէզիի , աղամանդի ,
ժամացոյցներու , շղթաներու և ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՅ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապուսիկ գնողներու համար հարիւ-
րին 20 կանխիկ և մնացեալ գումարին հա-
րիւրին 5ը չաբաթական վճարմամբ .

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին
5 զեղչ .

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն մի-
միայն աղամանդեայ դոհարեղէնները երբ
գործածուած լայց անվիտու մնացած ըլլան ,
հարիւրին 10 զեղչով , իսկ ապուսիկ ծախ-
ւած և անվիտու մնացած միմիայն աղաման-
դեայ դոհարեղէններէն ալ հարիւրին 15
զեղչով ես կ'առնուին :

ՍՍ.ԱՐԿՈՒԹԵԻՆ ԶԿՍ.Յ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԷՆ ԱՌԱՋ

(ԲԵՐԱՅԻ ԿԵԱՆՔԷՆ)

Մօտալուռ բարեկենդանի սա եռուղեւ օրերուն կարծեմ աւելորդ չըլլար քանի մը տող նուիրել Բերային, որ խերը կանխէ բարային:

Ամէն ոք կը ճանչնայ Բերան, և ոչ թէ լսած բերնէ բերան, մանաւանդ կիներ թիզ թիզ չափած են անոր Մեծ փողոցը աջ ու ձախ ի խնդիր ելաւո գլխարկներու, Ֆրչա-Ֆրչ հագուստներու և կամ սագերու պէս կուրծքը դուրս քօռէններու, չսեմ պիզ պլուռում պօթերու, որոնք նոյն իսկ Բերայի բնիկներուն յատուկ են, մէյ մ'ալ Սկիւտարցի . . . քալիք օրորդներուն:

Ամէնուն աչքը հոգ է: Աղէկ բան մը գնելու համար Բերա կելլան, աղէկ և ճիս ապրուելու համար գրպաննուն քսակը ուն մաժեռո՞ւ ձայն տուող պոչերնին շտկածները հոն կը հաստատուին: Գրպաննին քսան զըրուշ էվէլցնող Ֆիլաան միւսիւնները հոգ կը վազեն: Աղջկանը ճէհէղին գրամ չի խնայող մայրերը հոն կ'առնեն շունջերնին և քուբային իննոցէն սակի ակնկալող խաղամուշներու ոտքը կ'ամուրջէն ասդին չանցնիր: Ինչ մաքնիսականութիւն, ինչ քաշող յատկութիւն մը ունի սա Բերան, չեմ հասկցած ու չպիտի կրնամ հասկնալ կարծեմ մինչև փակունն աչաց իմոց և ի հանգիստ վաստակափեկ մարմնոյ իմոյ . . . :

Սակայն ճշմարտութիւնը սա է որ Բերան այն պոչ խաղցնող պչրուհին է, որուն շուրջ ամէն դասակարգէ ամէն անհատ կը գալարուի ու հոգի կուտայ զայն վայելելու համար:

Բուն Բերան երկու յատկութիւն և կամ առաւելութիւն ունի, ցերեկը առուտուրի և գիշերը զբօսանքի կրկնակ բարեմասնութիւններով, եթէ երբէք ատոր բարեմասնութիւն կարենանք ըսել:

Ցերեկուան եռուղեւ բազմութիւնը որ շիտակ ճամբուն երկայնքը քօթուառներու վրայ զիրար կը կոխտան, լոկ շահու, կամ առուտուրի ժխորն է որ երբէք չի դադրիր, իսկ արեւին մայրամուտէն վերջ նորէն անգամ տեսնուած խուռներամ բազմութիւնը, զբօսանքը և հաճոյքը հալածող դասակարգէն է որոց մէջ բուն բեռօթը չի տեսնուիր, և կամ ցանցաւ թիւ մը կը կազմեն անոնք, մնացած մեծամասնութիւնը հոսկէ հոնկէ համոզներ են և որոց գրպանը առ հասարակ մէկ քանի ճերմակէն զատ բան չես գտնիր:

Այս անգամ իբր չաթուան քօղքոյի պատիւ ունիմ ներկայացնելու իմ գերազնիւ ընթերցողներուս Բերայի չաթաթ գիշերը, մանաւանդ բարեկենդանի չաթութուն, նա մանաւանդ զոյգ նշանածներու գիշերային պտոյտը աղջկանը մօրը հետ: Կարծեմ սիրտ նեղանալիք լաքլաքի մը չըլլար ըսելիքս, ու բանալ չի տար բերանները յորանջելու համար:

* *

Միւսիւ Գիրգորիկին ապալիս սուռաթին հաւնած էր աղջիկը, ու մայրը՝ ձեռքի արհեստին՝ որ էր գրագիր:

Վեց ամսուան նշանած էին երկուքն ալ, և այդ անուշ ժամանակամիջոցին նուէր ըլլալով աղջիկը քլարտան թառօշ մը բանած էր աղուն Ֆէռքա խառիֆէի վրայ, ու մայրը Լուսեայ՝ Ծնունդին խթումին գիշերը քլարտան հատ ձուկի տօլմա գնելով փեսին տունը՝ խնամին զրկած էր, պաշարները ինք իր ձեռքովը Եգիպտաշուկայէն (°) գնած ըլլալու յոխորտանօք: Իսկ գալով փեսին՝ միւսիւ Գիրգորիկին, կաղանդին գիշերը կուրծքի ժամացոյց մը տուած էր իրենին, որ օրը տասերկու անգամ կը կենար . . . :

Անցեալ չարթու — որովհետեւ տղան Բերացի էր — ուզելով իր նշանածին ու զոքանջ տրկինին օր ցուցնել, Բերա հրաւիրած էր որպէսզի գիշեր մը կենան:

Առանց լայն ու պարագ մանրամասնութեանց մտնելու, թէ ինչպէս մայր և աղջիկ Բերա ելան այդ չարաթ երեկոյին, ինչպէս ծանօթացան իրենց խնամին և ինչպէս մեր ըսելիքը կսկսինք ճիշդ այն կետէն, երբ գիշերուան ճաշէն վերջ մայր աղջիկ, տղան ու տղուն մայրը դուրս կելան դէպի չիտակ ճամբան զբօսնելու, օր տեսնելու համար:

Ժամը գիշերուան երեքն է, օդը ջինջ ու պայծառ, դուրսը երկսեռ բազմութիւն մը վեր վար կը պտտկին առանց իրարու աչքի մէջ նայելու Սկիւտարցիի պէս, ու մէկը միւսին գիտողութիւն մը չընէր:

Լուսեա տրկին, իր խնամուհիին հետ, քով քովի, իսկ միւսիւ Գիրգորիկ իր խօսեցեալին Նելլիի հետ թեւթեւի կը յառաջանան Լիւքսեմպուրգի առջեւէն:

— Էրնէկ վրանիդ խնամի՛ս, խօսք կառնէ Լուսեա, մուտու ձեզի քի սասնկ չէն չէնլիք տեղ մը կը վայլէք վայլեցունէք կոր . . . ըսի եա մուտու . . .

— Ամա՛ն քուրուկ ասանկն ալ պիտի ըլլաւ բան է, պաղի Գիրգորիկս հայտէ կրէտէ սանկ մը պիլէ չեմ ելար, անցածնոր բանթալօնիս բաշային համար թանթէլա պէտք եղաւ, ախոր օր գացի եկայ նէ հալ եկաւ գլխուս:

— Էյ չէ՛ . . . մըսէր հոգիս հոս տեղի զանցան ալ պաշխա թուելի է, անչէ ըսելի՛քս եա, աս կէնճերը թեւթեւի կերթան կուգան կոր նէ բլթին նշանած են . . .

— Ո՛վ գիտէ՞ մարիկ . . . ի՞նչ թէրթիւ պան է, ատանկ ալ ըլլայ նէ միամիտակ նասը՛լ կըլլայ . . . ասոնց հարը մարը ինտո՛ր կը ձգեն . . .

— Վույ պօյերնին սիրեմ, չիֆթ մը կիւլ ֆիտանիի պէս, ասոնց մուհապէթին նայէ, Աստուած չար աչքէ պահէ, Լանի բան մըն ալ չըրի՛նք ամա՛ . . .

— Դուն իս աղէկ նայէ, տղուս ելէկին սօլ ճէպին կարը քակեր տէ բալուրեայի թէք մախաս մը իլէն անծակ պուսնուս մըն եմ կպեար . . .

— Էյ դուն ըսիր նէ պարէմ ես ալ ըսեմ, Նելլիիկիս ճէպն ի վար մալի աթլազ չընընիկի մը մէջ օխտը թանէ առաւ իլէն պճեղ մը սըխտոր եմ դրէր . . . քա մարի՛կ, աչկէ, ի՞նչ գիտնամ կըլլայ քի կը պահէ . . .

Մինչ այսպէս երկու խնամիներ կը խօսակցէին փողոցին երկայնքին, իրենցմէ քիչ մը առաջ գացող զոյգ նշանածներն ալ հետեւեալ խօսակցութիւնը կընէին թեւթեւի ինչպէս ըսինք . . .

— Կախութի՛ք հոգի՛ս . . . յոգնեցա՛ք արդեօք . . .

— Էյ չէ, տահա օտքերս ճուր չինչաւ ամա, խուշիկս քու խուլէթիդ ինծի հէրիք է . . .

— Աղնուագոյն էք հոգիս . . . եթէ կուզէք քիչ մը Սքիւտիտը նստինք:

— Ամա՛ն դուն ալ, ի՞նչ տեղը կայ քի փարայէ ելլաս . . . սանկ սօլաջօ մը կնենք եա կը դառնանք . . .

— Բայց կարելի է տրկին մայրը յոգնած է . . .

— Է՛հ . . . դուն գիտես քէսէլիդ տանը՛միշ եղիր խուշս, ինծի կէօրէ հալա խօշ . . .

Միւսիւ Գիրգորիկ իր զօքանջին մօտեանալով .

— Կը փափաքիք Տիկին պահ մը հանգիստ առնել . . .

— Ո՛վ կը ծախէ կոր եալրուս . . .

— Ի՞նչ բան Տիկին մայր . . . բա՛ն մը կուզէք . . .

— Հիմակ բան մը ըսիր նէ, սա առնելը հասկցայ ամա, ի՞նչ ըլլալը չիտեմ կոր . . .

— Հա՛ . . . այո՛, հանգիստ առնէք ըսի, Սըլանտիտ մանանք, թէ տաք է և թէ մէկ մէկ եքի՛ն. կառնէիք . . .

— Էյ դուն գիտես եալրուս երխը՛մ բաներ մընէր տէ քանի մը զրուչի է նէ հոգ չէ . . . գիտես եա մենք եապանճի չենք, հարսնիքիդ ալուճ ալուճ խուսուչ պէտք է:

— Կաղաչեմ Տիկին մայր, այդ կարգի էքօնօմիք բաներու գիտակցութենէն զուրկ չեմ . . . հրամանցէք . . .

— Հապա՛ . . . Կոմիկն ալ անանկ ըրաւ, ըրա՛ւ ամա՛ եաքէն պսակին տակի սէթրին քիրայով կռնակը անցուցին եալրուս . . .

Սրբանտիտի սրբահը չի գիտցող չիկայ կարծեմ, ամեն մարդ գոնէ հեղ մը անոր հսկայ ապակիներու ետին նստած, բայց մը կերած է իբր բաւ քան: Հիմա ներսը բազմութիւնը խոնուած, ամեն ոք սեղան մը գրաւած է: Կին, օրիորդ, այր, երիտասարդ բոլորն ալ ուրախ զուարթ իրենց խօսակցութեան կը պարտապին, երբ մեր ինտելիքենտ մարդ — քառակը ներս կը մտնէ դուռնէն:

— Գուզում որդտի, գիտնայինէ չէյի մտնար . . . լուսահոգի աղաս հիշ խայլ չէր ասանկ պալօղները մտնալու . . . խօշ բարկենտանք է զարար չունի՞ ամա . . . թող ըլլայ . . . :

— Ձէ ճանճմ քուրուկ նասըլ պալօղ, հոս Պէյօղլուին էն մէնշուր տեղն է, տղաս Գիրգորիկս ալ իքոսմ մը ըրած ըլլայ տէյի առաւ հոս եկաւ . . . :

— Հրամանեցք Տիկին, աթոռ մը առէք, դուք ալ մայր . . . ըսելով փեսացուն իւրար կանցնի . . . :

— Նեվրիկ սանկ քոլօքս եկուր քի տիւլէտէսթան չըլլանք, ան ճափան մութ տեղը մէկտեղ քալեցիք ամա հոս տեղը լուս աչքով . . . կելլան վրանիս մուր կը քսեն . . . :

— Աման տուտու, մեղի ո՞վ կը ճանչնայ . . . :

— Տէր ողորմեայ ըսէ, լուսահոգի հարդ չի ճանչցող կա՞ր աճապա . . . Պէյօղլու մը կելլար նէ, համար հազար խանութը առչընլամիշ կնէր . . . էյ ֆարազա ես ալ անոր կնիկը գտնուէր կ՞մ տէ դուն ալ աղջիկս ես նէ՞ . . . :

— Տիկին մայր, ի՞նչ կախորժիք . . . կը հարցնէ միւսին տեսնելով որ կառսօնը եկած մեռելի չամտանի պէս տնկուած էր մօտերնին:

— Եավրուս, մինակ իսկէմրիին քիրան տասը քսան փարայ տուր տէ ելլէնք կայնինք . . . պօշ բան է . . . :

— Տէր ողորմեայ Լուսիկ քուրուկ եղած պան չէ, սանկ բաստա մը, չուռուպ մը բան մը . . . :

— Էյ չէնէ շէրպէթ մը կը խմեմ խաթերնուդ համար . . . :

Ու քիչ վերջը կառսօնը չորս օռանժառ կը բերէ . . . :

— Էյ ձեզի բան մը ըսե՛մ, մեր սանտրիս պուռնիին պապա Մըկըրը ասկէ տահա է՝ վէլօք պան գիտցող է, սա նայէ չուռուպ պերաւ տէ մէջը սաղ մազ ի՞նչ ըռէզիլու թիւն է . . . :

— Տիկին մայր . . . օշարակի յատուկ քիւպեր են ասոնք, որոնցմով կը խմեն ըստ արդի նորոյթին . . . :

— Նէ միւնքին քի Արթինը ասանկ բան ընէ . . . հի՛ . . . վայ մեղքին սապօնու ճուրեղով կը սրբեր տէ անանկ կը պերէր մարդը, հաստա մեր հարսնիքին ալ սուֆուաճի տէյի հարըս պերել տուա՛ւ տէ . . . :

— Գուրուկ իշտէ աս մախառնաներուն համար է, Գիրգորիկս ըսել կուզէ քի արդի . . . սանքի հիմաճուկուան զանցան տէյի . . . :

— Հա՛ . . . ես իսէ Արթինը հասկցայ . . . էյ հրամանեցք նայինք ամա կը խպնիմ կոր, չալապուռիի պէս ֆըռթ ֆըռթ վեր քաշելու . . . :

Վերջապէս օռանժառները կը խմուին, ու ալ աչքերը կսկսին անոր ասոր վրայ դառնալ ու բերանները կը լարուին ի խնդիր բանբասանքին:

— Քա վայնի հալուտ, լսեր էյի, լսեր էյի ամա՞ . . . աստարն ալ չըլլար . . . :

— Խէր է ինչալլահ քուրուկ, ի՞նչ կայ ի՞նչ եղաւ կը ճայնէ փեսին մայրը, որ կողոտ գլխարկին տակ խերացի ըլլալու յոխորտանքը ունէր:

— Քա ճանճմ ի՞նչ պիտի ըլլայ, ըռէզիլութիւն, սա դիմացի կնիկը, նայէ կնկոի հէմէն, քովի էրիկմարդուն հետ տիւզճէ էսմէնէ միւշէվէշլէնմիշ կըլլայ կոր, նէ նստողները սեպել կայ, նէ բան . . . գիտես քի մինակ օտանին են . . . տօղռուսու անէքի մննք ալ փարայ պիտի տանք նէ աս պաներուն ալ կէօղ միտաֆիրի ըլլալը . . . ի՞նչ գիտնամ . . . :

— Գուրուկ ո՞վ գիտէ, ախպարնէ դահէր . . . :

— Քա նասըլ աղբար, եռմուրճախին աչքերը նայէ ճամ շէքէրիի պէս կը վառի կոր . . . վըռթկա՞ծ չունէր . . . :

Նոյն ատեն տեսնելով որ իր աղջիկն ալ միւսիւ Գիրգորիկին չատ մօտը նստած քիթ

քիթի կը տեսակցին, մէկ աչքով մը նշան կուտայ որ իրեն քովը գայ:

— Ինծի նայէ որդտի, եապանճի ըլլանք նէ նէիսէ, սա նստողները կը տեսնաս կոր եա, նայէ մեզի պէս քիպար մը կա՞յ մէջերնին . . . կուզես կոր քի մե՞նք ալ առնոց սրբան ասնինք . . . :

— Տուտու ինչ կըսես կոր . . . ինչ եղաւ քի . . . :

— Տահա՞ ինչ պիտի ըլլայ, անտար տըղուն քիթը կը մտնաս կոր քի պըրընները քիսվէթդ կարկ կընէն կոր . . . իրաւցունէ քէօռ եմ . . . :

— Տէր ողորմեա՛յ . . . տուտու ամօթ է:

— Հիմա կլոխս տնկեմ դուրս նետուիմ նէ ան վախթը կը տեսնաս, սա Պէյօղլունին ճուրէն է զահէ՛ր քի պառտախ մը խմողին աշկին ֆերթիկը կը տառնայ կոր . . . :

Նոյն ատեն սրահէն ներս կը խուժեն առու էդ մաքրներ, ամէն մէկը ալաղան ցատկըռուքներով: Եւ որովհետեւ Լուսիա տիկին ճամբուն մօտ նստած էր, դիմակաւորներէն չիք երիտասարդ մը իրեն մօտենալով ձեռքը կը խնդրէ:

— Եւմուռճախս տանիս, չան սուռաթ . . . ո՞վ ես . . . :

Մասքէն կստիպէ ու ձեռքը քաշել կուզէ:

— Նալլէթ չըլլաս հէմէն . . . քա ո՞վ ես . . . կը ճաշնա՞ք կոր, ո՞վ է . . . :

Մասքէն աթոռ մը առնելով մօտը կը նստի:

Ծօ ո՞վ ես, քիմին, քա աճապա թօփալ Ուստիկին տղան է . . . ղէրէ անցած տարի չէ առջի տարին օր մը ժամուն դուռը մարը ըռաստ եկայ նէ կէնճը տէրալէշմիշ եղաւ քի հաշարի է տէյի . . . :

— Տիկին մայր, խօսք առաւ միւսիւ Գիրգորիկ, ասոնք ծպտեալ մասքէներ են, որոնց ըրածը այսպանելի չըլլար . . . :

— Աման ետվրում սա խըռսիս առանքու գրաբառդ ալ չեմ կրնար կսր մարսէր . . . մէյ մը տուն հասկցի քի ո՞վ է տէյի . . . :

Նոյն ատեն մասքէն օրիորդ Նելրիկին կը մօտենայ . . . :

— Էյ իշտէ ա՛տ չեղաւ . . . քա ճանըմ միւսիւ Գիրգոր տիրութին չընե՞ս . . . աղջկանը կը մօտենայ կոր . . . :

— Տիկին մայր . . . անշուշտ ծանօթ մըն է . . . համբերէցէք . . . :

— Ծօ մուչինայ, լեզուդ մո՛ւկն է կերեր, տա վար ամենիք սուռաթըդ պաց տէ հասկնանք, կետի՛նը չանցնելիք մը պըռէքիմ . . . :

— Պօնօղ տիէղ մատամա . . . վամօղ ալա պալօղ . . . :

— Վույ ասդին եկէք, նալլէթ չըլլաս հէմէն . . . անդի՛ն ծօ . . . սա նայէ բառ լախ կէնճ մը չի տեսնան, ըչըխ պէօճէյի պէս էթուաֆը կառնեն կոր . . . :

— Ներեցէք Տիկին մայր, ձենէ ախորժեցա՛ն կերեալի . . . :

— Տուտուէդ թող ախորժէին . . . ան տահա կէօստէրիչի է . . . :

— Վույ վրաս բարի . . . ըսաւ խնամին, մինչ մասքէն իրէն յատուկ կոտորուքներով կը հեռանար մօտերուն:

— Զեզի պան մը ըսեմ Պէյօղլունիդ ունենաք, հի՛ . . . վայ մեղքիս կապեն նէ սահաթ մը չեմ կրնար նստի, քալեցէք տուն իշնանք ղէրէ վրաս լէօպէթ կը կոխէ կոր . . . :

— Բա տուտու ասանկ իրինկուն քիչ մը նստինք . . . ըսաւ աղջիկը որ դեռ նոր տաքցած էր կռնակը ինչպէս նաեւ սիրտը իրենին հանդէպ:

— Եւմուռճախս տանիս քի դուրս իյնալուդ պէս էթտէր կը կըրիս . . . հիմա՞ ճուկ ես կը խառնուիմ, վաղը կարգուիս նէ, կուզես նէ հաթախդ առ սօխախը փռէ ան ալ կլխաւորիդ գիտնալու պանն է . . . :

— Բայց Տիկին գիտնալու էք որ հոս Բերայի մէջ ցերեկէն աւելի գիշերը կըքօսնուն մանաւանդ Սպէնտիտի պէս տեղ մը:

— Պէ ետվրում մեր տարիքը կնիկները նէվաղիլի պէս համ չեն աւնէր ասանկ պաներէն . . . քալեցէք վրաս տաքութիւն կուգայ կոր տէ վուճուտըս ուլամ ուլամ դուրս կուտայ կոր . . . :

Ու տեսնելով որ ճար չիկայ, բոլորը մէկ կեւլան կը կայնին ու կը մեկնին:

Կէս գիշերին Լուսիա տիկին իր պառկած տեղէն կէս քուն կէս արթուն կը ձայնէ իր աղջկան.

— Նելրիկ պուտ մը ճուր կը լաբըրիմ կոր . . .

—
Զոյգ նշանածները մէկ մէկ տօմինօ հազած մեկնած էին տունէն դէպի պարահանդէս:

Բարոյական

Զեր աղջիկ դաւակները բարեկենդան գիշերով նշանածի տուն մի տանիք:

ԼԻԼԱ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի ԹԵՐԹՕՆԸ 3

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

— Տասնըմեկ հազար, ուրիշ հարիւր ուսուսիր վեց տարւոյն մէջ . . . գոչեց Մ. Սենթէզ որոտալից ձայնով մը, այս անեղ թիւին առջեւ : . . . 11,886 տարւոյն մէջ ենք և դեռ ես կ'ապրիմ . . . Ուրեմն 10,000 տարի քնացած եմ . . . Ճակատագիրս այսպէս է եղեր որ մօտ դար մը ապրելէ ետք, իմ ժամանակիս անգիտակից կերպով վերապրիմ և արթննամ այսպէս, իբր մէկ քեկորդ հին աշխարհին, ժամանակամիջոցէ մը ետք, որու տեւողութիւնը մարդկային միտքը հազիւ կրնայ երեւակայել . . . Բայց ինչո՞ւ այսպէս, բայց ի՞նչպէս և ի՞նչ հրաշքով . . .

Եւ Մ. Սենթէզ սմբած և սակայն ճառագայթալիր, այս խնդրին լուծումը գտնել կաշխատի տգնութեամբ :

Ոչ մէկ ազմուկ կը խանգարէ իր մտադրադումը : Իր լուրջ մենութիւնը կատարեալ է : Իր ձայնին յորդ չեղտերը փախցնել տալին խորհրդաւոր էակները որոնց խնամքներուն շնորհիւ կեանքի եկած էր : Ժամանակ մը կրցաւ ինքնիրմէջ խորասուզուիլ, մտքի կարողութիւններուն կոչում ընել և մտածումները շարադասել :

Նախ, իր յարութեան դէպքը իրական, անվիճելի էր : Ճնորքի մը խաղալիքը չէր : Իր սիրտը կանոնաւորաբար կը զարնէր, ուղիղը սովորականին պէս կը խորհէր, իր դատողութիւնը ու է վրէպ կրած չէր, իր դնդերները վերստացած էին իրենց առաձգականութիւնը, իրենց բոլոր կորովը, մէկ խօսքով կ'ապրէր : Եւ այս էր իսկական դէպքը ահաբեկիչ պարզութեան մէջ :

Բնախօսական տեսակէտով, այսինքն

զուտ գիտական տեսակէտով ծերունին լաւ գիտէր որ մեռած չէր կրնար ըլլալ վարը, սառնակոյտին վրայ : Եւ « յարութիւն » բառը որ կեանքի բացարձակ դադարումէ ետք դէպի կեանք վերադարձ կը նշանակէ, անյարմար նկատեց իր վիճակը բնորոշելու : Իր մեթոտական միտքը որ բացարձակապէս գիտական վարդապետութիւններով խմորուած էր, կը մերժէր հրաշքի մը ենթադրութիւնը : Ուրեմն կեանքի երկարաձգում մը տեղի ունեցած էր իր վրայ, իր կազմաւորութեան տարրերը պահպանող երեւոյթի մը շնորհիւ, երեւոյթ՝ որուն արտայայտութիւնները դեռ չէր կրնար բացատրել. միայն ցուրտին կրնար վերագրել որ զինքը ընկղմած էր այս անվերջ ուշաքարձութեան մէջ :

Եթէ խնդիրը պարզ բոյսի մը կամ նոյնիսկ ստորին դասու կենդանիի մը չուրջ դառնար, այդ դէպքը թէեւ արտակարգ բայց ընդունելի պիտի ըլլար, քանի որ դիտողներ կարգ մը փորձերով յաջողած են կեանքի տեւողութիւնը պահել բոյսերուն և ստորին կազմաւորութեանց քով, ծածկուած վիճակի մէջ :

Այսպէս, 1853 ին Բուտօլֆ գիտունը Ֆիւրէնցայի Եգիպտական թանգարանին մէջ ցուցադրեց ցորենի որայ մը որ 3000 տարի հնութիւն ունեցող մոմեայի մը դադաղին մէջ գտնուած հունտերուն խառնուած էր : Բայց ասիկա բան մը չէր և իբր հետաքրքրական պարզ պարագայ մը յիշատակութեան արժանի էր միայն, քանի որ անկից շատ աւելի զարմանալի դէպքեր կարելի է յիշել : 1707 ին Սըալանցանի գիտունը կըրցաւ տառնումէկ անգամ կենդանացնել չոր-

ցուցած թաւալուկ կոչուող նախակենդանիները, պարզ մաքուր ջուրով թրջելով միայն զանոնք: Վերջին ժամանակներս ալ Տուայէր կրցաւ վերապրեցնել ուրիշ տարրական կենդանիներ որոնք 100 աստիճան տաքութեան մէջ ջորցուած էին:

Երբ նկատի առնենք մարդուն և այդ կենդանիներուն միջև տարբերութիւնը օրինակները տկար պիտի մնան: Այսու հանդերձ աստիճանաբար բարձրանալով կենդանաբանական սանդուխէն, նմանօրինակ դէպքերու կարելի է հանդիպիլ, զանազան պատճառներու ազդեցութեամբ: Մատերայի գիտիի տակառներուն մէջ ըստ երեւոյթին խեղդուած կարծուած ճանճեր Եւրոպա հասած են երկար ճամբորդութենէ մը ետք և վերակենդանացուած են: Չորեակը (գիմա պեօնի) շաբաթ մը ջուրի մէջ պահելէ և յետոյ արեւին տակ չորցնելէ ետք կարելի եղած է վերակենդանացնել: Հոչակաւոր բնախօս մը Երթօթիկով կամ Քիւրարով թռնաւորելէ ետք սարդեր, սալամանդներ, և գորտեր, կրցած է արթնցնել զանոնք շաբաթուան մը երեւութական մահէ ետք:

Յուրտին ազդեցութեամբ ձեռք բերուած արդիւնքները ամենէն արտակարգ են: Սրալանցանի որ հիւանալի համբերատարութեամբ մը ուսումնասիրած էր այս խնդիրը, երկու տարի ամբողջ կրցած է ձիւնի դուռի մը մէջ պահել բազմաթիւ գորտեր: Այս անասունները չոփ-չոր եղած էին, կարծրացած, գրեթէ փոշիանալու մօտ և իրենց վրայ կեանքի, զգայնութեան ու է գիծ չէր նշմարուեր: Բայց չափաւոր և աստիճանաբար աւելցող տաքութեան մը ցուցադրուելով, կարելի եղաւ անոնց տալ իրենց շարժումները և միւս բնախօսական գործողութիւնները: Տեսնուած է որ դաշլածուկեր (թուռնա պալըղը) և սալամանդներ արթնցած են զանազան դարերու մէջ սառնակոյտներու պէս կարծրացած, քարացած ըլլալէ ետք:

Այս փորձերը միայն գիտական աշխատանքներու մէջ չէին սահմանափակուեր: Անոր գործնական օրինակը կը տեսնուի նաև Ստիական Ռուսիոյ և Հիւսիսային Ամերիկայի ժողովուրդներուն մէջ: Ասոնք ձուկերը կը սառեցնեն, քարի պէս կը կարծ-

րացնեն և կը ղրկեն հեռու տեղեր, ուր ձմեռը անցնելուն այդ ձուկերը կարթնցնեն սովորական ջերմութեամբ ջուրի մէջ ձգելով:

Այս սովորութիւնն էր որ Անգլիացի մեծանուն բնախօս Հունթըրի ներշնչեց մարդկային կեանքը անորոշ ժամանակի մը համար երկարաձգելու գաղափարը, մարդուն մարմինը յաջորդաբար սառեցնելով, աւելի կամ երկար քունի համարժէք, որու միջոցին կեանքը բացարձակապէս պիտի դադարէր և յետաձգուեր: Բայց դժբաղդաբար Հունթըր մեռաւ այն պահուն իսկ երբ անսլուալի արդիւնքներ կը խոստանային իրականութեան սկզբնաւորութիւն մը տալ իր յանդուգն ենթադրութեան:

Հէգ Մ. Սենթեղ քանի մը վայրկեանի մէջ երեւակայելէ ետք այս աշխարհի բարդ և անծանօթ հարցին երեւոյթները, ոչ մէկ հետեւութիւն կը գտնէր:

— Աւաղ, ըսաւ ինքնիրեն, լաւ գիտեմ թէ կեանքի դադարումը կարելի է ձեռք բերել զոնէ երեւութապէս, երկար ատենի համար, նոյնիսկ առանց ցուրտին ազդեցութեան դիմելու: Իմ վաղեմի բարեկամ Բուշտի Քրիշնա, քանիցս չէր թաղուած, ինքզինքը ձգելով մահաքունի մը մէջ, որ ցոյց կուտար մահուան ամէն նշանները: Վերջին անգամ երբ այս հրաշալի փորձին ենթարկեց ինքզինքը, այսօրուան պէս կը յիշեմ, Պէնարէսի մէջ էր: Մտաւ պարկի մը մէջ որ գոցուեցաւ և դրուեցաւ չրջանակներով ամրացուած սնտուկի մը խորը: Մնտուկը թաղուեցաւ իր պարունակութեամբ 10 ոտք խորութեան մը տակ: Փոսը փորուեցաւ և հողին մէջ գարի ջանուեցաւ որ ծլեցաւ, մեծցաւ և հասունցաւ: Անգլիացի պահակներ դրուեցան գիշեր ցորեկ հսկելու այս տարօրինակ գերեզմանը: 10 ամիս ետք, Բուշտի, որուն գերեզմանը բացուեցաւ Բրիտանական իշխանութեանց և գիտուններու խումբի մը աչքին առջև, քնացածի երեւոյթ մը ունէր: Տակաւ առ տակաւ արթնցաւ և երկու ժամուան խնամքէ մը ետք ոտքի ելաւ և սկսաւ քալիլ: Ինչո՞ւ այս փորձը չերկարաձգուեցաւ քանի մը տարիներ: Քանի մը տարի . . . լաւ: Բայց տասը հազար տարի . . . :

(Շարունակելի)

Արտօգոսէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵՍԵ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԳԵՅԱՆ

Պապ.Ալի Գասէտի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵՂԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համամ, Թօփապեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ տու-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձեռնուան յատուկ ընտիր հա-
գուսաներու, կանանց թէյրոհիւններու և
տղայոց չիք և գիմացկուն ֆօքսիւններու
ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ
շերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ է.
Դաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ, Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՑԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

الخطوط الجوية
٢٠٩٠١٢٢



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՑԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեԳափու, ձեղալ-Պեյ խան, քիւ 10



ԱՆՏԵԼԻՊ
ՎԱԺԱՌԱՏՈՒՆ
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԵՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱԴՐԱՅ

Փօնօկրաֆի Է. Գլաններու, Կրամֆօնի
Է. Երկկողմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահճե Գափու, Հաճի Պեքիւր
Էֆենտիի կից, Եալտըզ խանի տակ
քիւ 2: Մասնաճիւղ Պահճե Գափու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տու-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆօններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի տուաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Սնգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: